

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հարկային քաղաքականության ամենակարևոր խնդիրներից մեկը հարկային բեռի արդար և արդյունավետ բաշխումն է: Հաշվի առնելով պետության ֆինանսական պահանջները, հարկման հարաբերությունները պետք է կառուցվեն այնպես, որ հարկերի գոյությունը ոչ թե վատթարացնի, այլ բարելավի հարկատուների կենսապայմաններն ու ընդլայնված վերարտադրության հնարավորությունները: Հարկերի բաշխումը և դասակարգումը դա տնտեսական և սոցիալ-քաղաքական խնդիր է: Տվյալ գործընթացի մանրակրկիտ ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշել, թե իրականում ո՞վ և ի՞նչ չափով է կրում իր վրա հարկային բեռը:

Հարկային բեռի բաշխման խնդիրները, դեռ XVII դ. հետաքրքրել են մերկանտիլիստներին, որոնց դատողությունները հասարակության մեջ հարկային բեռի բաշխման մասին, հիմք հանդիսացան հարկերի վերաբերյալ տարբեր տեսությունների համար: Ա. Սմիթը հարկային բեռի բաշխման գործընթացում կարևորում էր արդարությունը և հավասարությունը: Ընդհանրապես, նա հարկային համակարգի զարգացումը կապում էր հարկման սկզբունքների կատարելության հետ: Ա. Սմիթը հարկային բեռի էությունը կապում էր ռենտայի հետ, քանի որ, ըստ նրա վերջին հաշվով, բոլոր հարկերը գանձվում են հողատերերից: Դա է պատճառը, որ նա հարկման տնտեսագիտական բովանդակությունը կապում է ռենտային հավելյալ եկամուտների հետ:

Հարկային բեռի բաշխման վերաբերյալ իր տեսակետն է արտահայտել նաև Դավիթ Ռիկարդոն իր աշխատություններում: Լինելով հարկային տեսության լավագույն ներկայացուցիչ՝ Ռիկարդոն առաջ է քաշում մի հայեցակետ, ըստ որի պետական բյուջեի դեֆիցիտը վճարվում է սպառողների կողմից՝ հարկերի ավելացման միջոցով: Դրա հետևանքով

սպառողի կայուն եկամուտները չեն աճում, այլ միայն վերաբաշխվում են տարբեր ժամանակների միջև: Ռիկարդոն նշում է, որ հարկերի կրճատումը մեծացնում է սպառման ծավալները, չնայած որ պետական խնայողությունները չեն փոխվում: Նա բացահայտել է այն ազդեցությունը, որ ունենում են հարկերը տարբեր ապրանքների պահանջարկի և առաջարկի վրա: Ի տարբերություն Սմիթի, Ռիկարդոն նշում էր, որ հարկային բեռը ընկնում է ինչպես ռենտայի, այնպես էլ շահույթի վրա՝ նպաստելով տնտեսական հավասարակշռության ստեղծմանը: Հետագայում, Ա. Մարշալը, Ռիկարդոյի այս տեսակետը զարգացնելով, եկավ այն համոզման, որ հարկային բեռի բաշխման պայմանները որոշվում են պահանջարկի և առաջարկի առաձգականությամբ: Առաձգականության գործակցից կախված հարկային բեռը կարող է ընկնել մեկ արտադրողի, մեկ վաճառողի, մեկ էլ սպառողի վրա:

Ձ. Քեյնսը հարկային բեռի բաշխման հարցերում կարևորում էր հատկապես արդյունավետությունը, այն համարելով հարկային քաղաքականության նպատակ: Նա գտնում էր, որ լրացուցիչ խնայողությունները կարելի է վերցնել հարկերի միջոցով և ներդնել արտադրության մեջ՝ ապահովելով համապատասխան տնտեսական աճ:

Այսպիսով, հարկային բեռի բաշխման հիմնախնդիրը կարևորել են բազմաթիվ տնտեսագետներ, արտահայտելով տարբեր տեսակետներ, մոտեցումներ և սկզբունքներ: Մեր կարծիքով հարկային համակարգը համարվում է զարգացած, եթե հարկային բեռը բաշխվում է առավելապես արդարության և արդյունավետության սկզբունքներով:

Հարկային քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր գործոններ, առաջինը, հարկերը պետք է համատեղելի լինեն տնտեսական արդյունավետության հետ: Երկրորդ, հարկային համակարգը պետք է լինի հավասարադրական, այսինքն, այն պետք է համատեղելի լինի արդարության սկզբունքների հետ: Արդյունավետության և արդարության սկզբունքները, հարկային բեռի բաշխման գործընթացում պետք է հանդես գան միասին և միաժամանակ: Նշված սկզբունքներից որևէ մեկին բացարձակ նախապատվություն տալը կրճատում է մյուսի լիարժեք

կիրառման հնարավորությունը: Հաճախ բարձր հարկերի առկայությունը ենթադրում է անարդարության որոշակի տարրեր, սակայն արդյունավետության առկայությունը կարող է արդարացնել այդ անարդարությունը: Արդարության կամ, ինչպես հաճախ ասում են, հավասարության սկզբունքն անորոշ է, և տարբեր մեկնաբանությունների տեղիք է տալիս: Կան տեսակետներ, որ հարկերը պետք է զանձվեն համաձայն հարկատուների վճարման հնարավորությունների: Ըստ մեկ այլ տեսակետի՝ հարուստները ավելի շատ պետք է վճարեն, քան աղքատները: Մարդիկ պետության մասին կունենան դրական կարծիք և հեշտությամբ կենթարկվեն հարկային պարտավորություններին և կարգավորիչ քաղաքականությանը, եթե հավատացած լինեն, որ այդ քաղաքականությունը անաչառ է և տրամաբանական: Ինչևէ, արդարությունը պետք է հավասարակշռվի արդյունավետության հետ: Հարկային համակարգը, որն անտեսում է տնտեսական արդյունավետությունը, չի խրախուսում ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, միաժամանակ, տնտեսության համար բավականին ծախսատար կարող է լինել: Սակայն չհիմնավորված բարձր հարկերը կարող են առաջացնել լրացուցիչ հարկային բեռ, որն էլ առաջ է բերում պետության եկամուտների կրճատում: Լրացուցիչ հարկային բեռը առաջացնում է նաև այլ կորուստներ, որոնք տեղի են ունենում, երբ բարձր հարկման պատճառով դադարեցվում է գործարար նախաձեռնություն: Ենթադրվող արդյունավետության հետևանքով տնտեսական գործունեության դադարեցումը համարվում է զուտ կորուստ: Նման կորուստը չի երաշխավորում օգուտներ մնացածներին և կոչվում է մեռյալ բեռ (Deadweight loss)¹:

Շուկայական հարաբերությունների պայմաններում հարկային բեռի բաշխումը կախված է պահանջարկի և առաջարկի առաձգականության գործակիցներից: Այսպես, երբ պահանջարկը առաձգական է, զները բարձրանում են աննշան, և համապատասխան հարկային բեռի զգալի մասը

¹ Տես Ջ.Ղ.Գոթթնի, Ռ.Լ.Ստրոուպ, Տնտեսագիտություն, ԵՊԺՏԻ, 1999թ. էջ 144:

իր վրա է կրում արտադրողը: Իսկ ոչ առածգական պահանջարկի դեպքում գները եապես են բարձրանում, և հարկային բեռը ընկնում է գնորդների վրա:

Այժմ ներկայացնենք առաջարկի առածգականության փոփոխության և հարկային բեռի բաշխման կապը: Առածգական առաջարկի ժամանակ գները եականորեն կարող են աճել, և հարկային բեռը վճարում են հիմնական գնորդները: Իսկ ոչ առածգական առաջարկի դեպքում գները չեն բարձրանում, և հարկային բեռի ծանրությունը ընկնում է արտադրողի կամ վաճառողի վրա:

Հարկային բեռի ծանրությունը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$\mathcal{B}_p = \frac{\mathcal{P}_p - \mathcal{D} - \mathcal{C}}{\mathcal{P}_p - \mathcal{D}} \cdot 100$$

որտեղ $\mathcal{P}_p$ -ն իրացման հասույթն է, $\mathcal{D}$ -ն իրացվող արտադրանքի թողարկման ծախսերն են (առանց հարկերի վճարման), $\mathcal{C}$ -ն ձեռնարկության տնօրինության տակ մնացած փաստացի շահույթն է՝ հանած հարկերը:

Համարիչում, փաստորեն, համախառն շահույթի և զուտ շահույթի տարբերությունն է, իսկ հայտարարում՝ համախառն շահույթը: Դրանց հարաբերությունը ցույց է տալիս, թե միավոր շահույթի ո՞ր մասն են կազմում հարկերը:

Ընդհանրապես, երկրում առկա հարկային բեռը կարելի է բնութագրել տարվա ընթացքում ստեղծված ապրանքների և ծառայությունների արժեքի (ՀՆԱ-ի) նկատմամբ գանձված հարկերի տեսակարար կշռի միջոցով: Իհարկե, այդպիսի բնութագրումը կրում է ընդհանուր բնույթ, սակայն, այն որակական ցուցանիշ է, և կարելի է համեմատական վերլուծություն կատարել: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է հարկատարության ցուցանիշը մի շարք երկրների կտրվածքով:

Գանձվող հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ 2000թ.¹

Երկրներ	Հարկերը ՀՆԱ-ի նկատմամբ %-ով	Այդ թվում	
		Ուղղակի հարկեր	Անուղղակի հարկեր
Հայաստան	24.5	11.6	12.9
Ռուսաստան	28.7	18.2	10.5
Լիտվա	30.4	17.8	12.6
Լատվիա	33.8	20.4	13.4
Էստոնիա	36.1	22	14.1
Գերմանիա	37.4	26.1	11.3
Ֆրանսիա	43.2	32	11.2
Շվեդիա	55.9	44.9	11
ԱՄՆ	28.5	24.2	4.3

Իհարկե, բերված աղյուսակի տվյալներից չի կարելի միանշանակ ասել, որ համեմատվող երկրներից ամենապածր հարկային բեռը Հայաստանում է: Այսպեղ անհրաժեշտ է հաշվի առնել հարկային համակարգի առանձնահատկությունները: Համեմատական վերլուծություն կատարելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նա– ստվերային տնտեսության տեսակարար կշիռը տարբեր երկրներում, բազմաթիվ այլ գործոններ:

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի ձևավորման սկզբից ի վեր նկատվել է ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների աճ հիմնականում հարկման բազայի ընդլայման հաշվին: Մասնավորապես 1994-99 թվականներին հանրապետությունում գանձված հարկերի և սոցիալական ապահովագրության վճարների տեսակարար կշիռը 13.5%-ից աճել է 11%-ով, կազմելով շուրջ 24.5%: Հարկման բազայի ընդլայման գործում

¹ Աղբյուրը. International Financial Statistics, January 2000. International Monetary Fund.

հատկանշական նշանակություն են ունեցել 1997թ. երկրորդ կեսից ամբողջությամբ ավելացված արժեքի գանձման «նշանակման վայրի» սկզբունքով հարկման անցումը, և նույն թվականին որոշ ենթակցիզային ապրանքների համար դրոշմավորման պարտադիր կարգի սահմանումը: Այնուհետև 2000-2001թ.թ. կատարված հարկային բարեփոխումների արդյունքում ևս ընդլայնվեց հարկային բազան, հատկապես ԱԱՀ-ի և սոցապ վճարների գծով:

Հարկային բեռի գնահատման գործում ՀՆԱ-ի նկատմամբ հարկերի տեսակարար կշիռը կարող է արդյունավետ ցուցանիշ լինել՝ միանման երկրների հարկային համակարգերի համեմատության դեպքում: Այս առումով պետք է հաշվի առնել հարկման օբյեկտի և բազայի ներդաշնակությունը, բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի չափը, ստվերային տնտեսության չափը և այլն:

Հարկային բեռի տարբերակման նպատակով կարելի է առանձնացնել երկրների երեք խումբ՝ հարկերի հարաբերականորեն բարձր մակարդակով բնորոշվող երկրներ, որտեղ հարկային գանձումները կազմում են ՀՆԱ-ի 45-55%, հարկերի միջին մակարդակով բնորոշվող երկրներ՝ 30-40% և հարկերի ցածր մակարդակով բնորոշվող երկրներ՝ շուրջ 20%: Հատկանշական է, որ հարկային բեռը հարաբերականորեն բարձր է առավել զարգացած երկրներում, որտեղ մեկ շնչի հաշվով ստացվող եկամուտները բարձր են: Այսպես, 1999թ.-ի տվյալներով, առաջին խմբի երկրների մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 24.9 հազ. ԱՄՆ դոլար, երկրորդ խմբում՝ 20.2 հազ. ԱՄՆ դոլար, իսկ երրորդ խմբում ընդամենը 5 հազ. ԱՄՆ դոլար¹:

ՀՀ-ում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմում է մոտ 500 ԱՄՆ դոլար, դա է պատճառը, որ ՀՀ-ում 24,5 տոկոս հարկատարությունը բարձր է համարվում: Այս առումով կարելի է նշել նաև առկա ստվերային տնտեսության մեծ տեսակարար կշռի մասին:

Հարկային բեռի թաշխման պայմանները որոշվում են նաև ուղղակի և

¹ Տես «Էկոնոմիկա» հանդես, Երևան 1999թ., N4:

ամուղղակի հարկերի հարաբերակցությամբ: Տարբեր երկրներում այս հարաբերակցության խնդիրը տարբեր ձևով է լուծվել: Ներկայումս զարգացած երկրների հարկային համակարգում գերակշռում են ուղղակի հարկերը, իսկ զարգացող երկրներում պետական եկամուտների գերակշիռ մասը ապահովում են ամուղղակի հարկերը: Հիմնական պահանջները ուղղակի և ամուղղակի հարկերի հարաբերակցության նկատմամբ, հետևյալն է, որ ֆիսկալ գործառույթ են կատարում մեծամասամբ ամուղղակի հարկերը, իսկ ուղղակի հարկերը կատարում են եկամուտների տնտեսական կարգավորման և բաշխման դեր:

Հարկային բեռի բաշխման տեսանկյունից ավելի անարդարացի են համարվում ամուղղակի հարկերը: Ամուղղակի հարկերի բեռը իրենց վրա են կրում գնորդները (սպառողները), քանի որ տվյալ հարկերը ամբողջությամբ ներառված են ապրանքների գների մեջ: Ամուղղակի հարկերի բաժինը ապրանքների գների մեջ, որոշ ապրանքատեսակների գծով, անցնում է 90%-ից: Ընդհանրապես, ուղղակի հարկերի դրույքաչափերը նվազման, իսկ ամուղղակի հարկերի դրույքաչափերը աճման միտում ունեն: Այս հանգամանքը խորը վերլուծության կարիք է գգում, և որևէ բան միանշանակ ասել չի կարելի: Մի բան պարզ է, որ յուրաքանչյուր երկրում հարկային համակարգի զարգացումը ընթանում է իրեն բնորոշ առանձնահատկություններով:

Հայաստանում ուղղակի և ամուղղակի հարկերի հարաբերակցությունը համապատասխանաբար 45% և 55% է: Նույնպիսի հարաբերակցություն է նաև Ֆրանսիայում: Համեմատելի են նաև հարկային դրույքաչափերը, սակայն անհամեմատելի են երկու երկրներում հարկային բեռի բաշխման արդարության և արդյունավետության ցուցանիշները: Մեր կարծիքով Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի կատարելագործումը պետք է առաջին հերթին վերաբերվի հարկային բեռի արդարության և արդյունավետության սկզբունքներով բաշխման հիմնախնդիրներին՝ հաշվի առնելով բնակչության և պետության փոխադարձ վստահության ձեռք բերման անհրաժեշտությունը: